ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզի
Այգեհատ համայնք, փող. 7/6 հեռ.041 25 12 67
Էլ.հաս.aygehat.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28 »սեպտեմբերի 2017 թվականի N 20- Ն

ԱՅԳԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 26 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, , <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով համայնքի ավագանին

ո ր ո շ ո ւ մ է.

1.Կատարել փոփոխություններ Այգեհատ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի << ԱՅԳԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 26 ն որոշման մեջ՝ համաձայն 1-ից 6 հատվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Ավագանու անդամներ **Կողմ(4)** **Դեմ( )** **Ձեռնպահ( )**

Աբգար Թամազյան

Ավետիք Շահվերդյան

Գառնիկ Շահվերդյան

Գոհար Շահվերդյան

Լևոն Շահվերդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱԿ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 28
գ. Այգեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Այգեհատ համայնք, փող. 7/6

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 »սեպտեմբերի 2017 թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, «ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով » ՀՀ կառավարության 12.04.2001թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Այգեհատ գյուղական համայնքի ավագանին

1.Տալ համաձայնություն Այգեհատ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-014-0548-0001 ծածկագրով 7.33234 հա 3-րդ կարգի,06-014-0548-0003 ծածկագրով 4.2358 հա 3-րդ կարգի , 06-014-0548-0007 ծածկագրով 6.00024հա 3-րդ կարգի,06-014-0302-0034 ծածկագրով 2.31654հա 4-րդ կարգի անջրդի վարելահողերը աճուրդ վաճառքով օտարելուն:

2. Աճուրդով վաճառվող հողամասերի մեկնարկային գին սահմանել 8.432.200 ՀՀ դրամ,5.888.000 ՀՀ դրամ,6.900.300 ՀՀ դրամ , 1.900.000 ՀՀ դրամ մասնակցության վճարը 1000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

3.Համայնքի ղեկավար Ա.Շահվերդյանին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասերի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (4) Դեմ ( ) Ձեռնպահ ( )

Աբգար Թամազյան
Ավետիք Շահվերդյան
Գառնիկ Շահվերդյան
Գոհար Շահվերդյա
Լևոն Շահվերդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՇԱԿ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ .

2017թ սեպտեմբերի 28
գ.Այգեհատ